Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 2-րդ, 33-րդ կետերի, և հիմք ընդունելով ծածկագիր թիվ 2026XX35YZ հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 13/1 հողամաս հասցեում գտնվող 08-013-0014-0019 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, քաղաքացի՝ Վահան Ալեքսանի Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված՝ տնտեսական շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների

օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված օրինականացման պայմաններին.

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում գտնվող /հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր,

1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 13/1 համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-013-0014-0019 կադաստրային ծածկագրերով հողատարածքում գտնվող 0.016008 հեկտար մակերեսով հողամասի վրա քաղաքացի՝ Վահան Ալեքսանի Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված 160.08 քառակուսի մետր արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, ճանաչել օրինական, այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

2. Օրինական ճանաչված և համայնքի սեփական՛ությունը համարված սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքի վերաբերյալ գրավոր առաջարկություն ներկայացնել կառուցապատողին՝ քաղաքացի Վահան Ալեքսանի Գևորգյանի (Նույնականացման քարտ՝ 011798097 տրված՝ 17.12.2020թ. 022-ի կողմից, բնակության հասցե՝ գյուղ Անիպեմզա 1-ին փողոց 1-ին նրբանցք շենք 30 բնակարան 3:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 791-Ա**

<<27>> օգոստոսի 2026 թվականի    քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 410-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 15-ի N 410-Ա որոշման մեջ «կառույցի հաշվառման մուտքագրման 2026AQMTJD տեղեկանքը» նշվել է սխալ.

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 15-ի N 410-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման հիմնական մասում նշված է «կառույցի հաշվառման մուտքագրման 2026AQMTJD տեղեկանքը» նախադասությունը փոխարինել «կառույցի հաշվառման մուտքագրման 2026EX2RKD տեղեկանքը» նախադասությունով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**    **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<27>> օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ Ν 792-Ա**

«27» օգոստոսի 2026 թվականի　　　　　　　　քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

***որոշում եմ՝***

1. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4264 (Տրանսպորտային նյութեր) հոդվածի «4500,0» թիվը փոխարինել «4600,0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «12286,7» թիվը փոխարինել «8586,7» թվով:

2. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 03 (Գրադարանի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «150,0» թիվը փոխարինել «1150,0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «300,0» թիվը փոխարինել «1100,0» թվով:

3. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 03 (Մշակույթի տան պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «1000,0» թիվը փոխարինել «592,0»

թվով, 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «300,0» թիվը փոխարինել «708,0» թվով:

4. Գործառական դասակարգման բաժին 01 խումբ 06, դաս 01 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածի «2200,0» թիվը փոխարինել «4000,0» թվով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**

**ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«27» օգոստոսի 2026 թվականի

քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն 793-Ա**

«27» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 12-րդ կետի 1-ին ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 71631100 մեկ անձից գնումներ կատարելու ընթացագարգով՝ տեխնիկական ստուգման ծառայություններ /ճանապարհների կամուրջների տեխնիկական վիճակի և շենքերի տեխնիկական վիճակի ստուգում/ ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Վաչագան Հեպոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ-ղեկավար

Արման Մկոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար – անդամ

Պատվական Սարգսյան– Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար – անդամ

2. Վերը նշված ծառայությունների ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Հայարփի Եղիազարյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<27>> օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ N794-Ա**

«27» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՂԱԶԱՐ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ»-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշման հավելված 1-ով և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Ղազար Սերյոժայի Մելքոնյանի հայտը՝

***որոշում եմ՝***

1. Տալ թույլտվություն «Ղազար Սերյոժայի Մելքոնյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 61402372, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Ջրափի բնակավայր, 2-րդ փողոց, տուն 4, գործունեության իրականացման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Ջրափի բնակավայր, 2-րդ փողոց, հիմնական շինություն)՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու նպատակով:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«27» օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ N795-Ա**

«27» օգոստոսի 2026 թվական    քաղաք Մարալիկ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ «ՆՎԵՐ ԱՐՏՅՈՒՇԱՅԻ ՍԵՎՈՒՄՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածներով, և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշումը և Նվեր Արտյուշայի Սևումյանի հայտը.

***որոշում եմ՝***

1. «Նվեր Արտյուշայի Սևումյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 61401766, իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, գործունեության իրականացման հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Հրանտ Շահինյան փողոց 1/1, հիմնական շինություն) տրամադրել տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելու թույլտվություն:

2. Թույլտվության գործողության ժամկետը սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**    **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«27» օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  N796-Ա**

«28» օգոստոսի 2026 թվական    քաղաք Մարալիկ

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 26-ի Անի համայնքի ավագանու թիվ 20-Ա որոշումը.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի բնակիչ Աշոտ Վոլոդյայի Ադամյանին (անձնագիր AS0248632 տրված՝ 2018 թվականի հունիսի 28-ին, 022-ի կողմից) տրամադրել 150000 /հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք սոցիալական աջակցություն՝ երիկամի վիրահատության համար, որը փոխանցվելու է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ » փակ բաժնետիրական ընկերությանը:

2.Սոցիալական աջակցության տրամադրումը իրականացնել Անի համայնքի բյուջեի «Նպաստներ» հոդվածի հաշվին:

3.Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«28» օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 797 -Ա**
**28 օգոստոսի 2026 թվականի**

# ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՎԵՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով ***որոշում եմ***

1. 2026 թվականի սեպտեմբերի 1-ին՝ **Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառման շրջանակներում նվերների ձեռքբերման համար** ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գոհար Ծերունյան՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ

**Հանձնաժողովի անդամներ՝**

Գոռ Ալեքսանյան՝ Անի համայնքի ղեկավարի խորհրդական

Աննա Գալստյան՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Լիլիթ Հարությունյան՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Քրիստինե Բավեյան՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի պարտականությունները կատարող Վաչագան Հեպոյանին

Միջոցառման անցկացման և նվերների ձեռքբերման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2026 թվականի բյուջեի վարչական մասի գործառական դասակարգման 08.02.04 (Այլ մշակութային կազմակերպություններ) և տնտեսագիտական դասակարգման 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածից հատկացնել 90000 (Իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«28» օգոստոսի 2026 թվական

քաղաք Մարալիկ

Հաստատում եմ՝
Անի համայնքի ղեկավար՝
Ա. Սարիբեկյան
«28» օգոստոսի 2026 թվական

# Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

## ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՎԵՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

| N | Ծախսերի անվանումը | Քանակը | Միավոր արժեքը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1. | Պայուսակ | 10 | 9000 | 90000 |
| | **Ընդամենը** | | | **90000** |

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.ԾԵՐՈՒՆՅԱՆ

Հաստատում եմ՝

Անի համայնքի ղեկավար՝

Ա. Սարիբեկյան

«28» օգոստոսի 2026 թվական

# ԾՐԱԳԻՐ

## ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՎԵՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| | Միջոցառման բովանդակությունը | Անցկացման վայրը | Կատարման ժամկետը | Կատարման պատասխանատու |
|---|---|---|---|---|
| 1. | Սեպտեմբերի 1-ին այցելություն Անի համայնքի ամենաքիչ թվով առաջին դասարանցիներ ունեցող դպրոցներ և պայուսակների տրամադրում առաջին դասարանցիներին | Անի համայնք | Սեպտեմբերի 1 | Գ.Ծերունյան ԿՄՍԵ հարցերի բաժին |

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.ԾԵՐՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 798-Ա**
31 սեպտեմբերի 2026 թվական

## ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՎԵՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 12-րդ կետի 1-ին ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի, ինչպես նաև 23-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/ 18930000 մեկ անձից գնումներ կատարելու ընթացագարգով՝ պայուսակների ձեռքբերման համար ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Գոհար Ծերունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի պետ – ղեկավար

Աննա Գալստյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի գլխավոր մասնագետ - անդամ

Լիլիթ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Վերը նշված ապրանքների ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Հայարփի Եղիազարյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**

**ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**«31»** սեպտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-22-37, էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 799-Ա

«01» սեպտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ, ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑ , ՏՈՒՆ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-100-0022-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ՝ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-ԻՑ ՀԵՏՈ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի N 749-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի «ա», ենթակետերի դրույթներով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցների հաշվառման տվյալների մուտքագրման **2026ENSE3U** տեղեկանքը, քաղաքացի Հովիկ Իշխանի Համբարձումյանի(3/5), Երազիկ Իշխանի Համբարձումյանի(1/5),Հայկուհի Իշխանի Դավթյանի(1/5) կողմից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան ներկայացված դիմումը՝ 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը, տնտեսական շինությունները, սանհանգույցը և պարիսպները օրինական ճանաչելու մասին.

**Որոշում եմ**

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Հովիկ Իշխանի Համբարձումյան /ծնված՝ 17-ը օգոստոսի 1980 թվական, նույնականացման քարտ՝ 019428614, տրված 11-ը դեկտեմբերի 2025 թվականին՝ 028-ի կողմից/,Երազիկ Իշխանի Համբարձումյան/ծնված՝ 22 հոկտեմբերի 1977թվական, անձնագիր՝ AV0548951,տրված 07 դեկտեմբերի 2022 թվականին՝ 022-ի կողմից/,Հայկուհի Իշխանի Դավթյան/ ծնված՝

11-ը հունիսի 1979 թվական, անձնագիր՝ AT0369132, տրված 30-ը հունվարի 2020 թվականին՝ 022-ի կողմից/, համատեղ սեփականության իրավունքով պատկանող (Հիմք՝ վկայական N 06052022-08-008) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայր 11-րդ փողոց, տուն 4 հասցեում գտնվող 08-100-0022-0021 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փաստացի 0.14843 հա մակերեսով հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 57,64 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակ /հետագայում՝ անշարժ գույք/, 19.83 քառակուսի մետր արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 74.71 քառակուսի մետր մակերեսով տնտեսական շինությունը, 9.10 ,6.96 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպները բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունները ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ շինություն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Շինություն, որի ընդհանուր մակերեսը կազմում է՝ **168.24** քառակուսի մետր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «ա» ենթակետերի համաձայն, վճարքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-

ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված՝ Մարալիկ քաղաքի համար սահմանված շինության՝ 0,0743 գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝

**168.24 քառակուսի մետր X 10000 դրամ X 0,0743 = 125 000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

բ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է **125 000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,** որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի **900495101447** հաշվեհամարին:

գ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Հողամասում առկա է 2021 թվականից հետո կառուցված շինություններ, որոնք օրենքով սահմանված կարգով ենթակա չեն օրինականացման, ուստի շինությունները թողնել ինքնակամ:

6. Պարտավորեցնել անշարժ գույքի սեփականատիրոջը սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքի, Սառնաղբյուր բնակավայրի 11-րդ փողոց , տուն 4 հասցեում գտնվող 08-100-0022-0021 կադաստրային ծածկագրով հողամասի վրա՝ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը, տնտեսական շինությունները, սանհանգույցը և պարիսպները օրինական ճանաչելու մասին» N749-Ա որոշումը:

8. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<01>> սեպտեմբերի 2026 թվական
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 800-Ա

«01» սեպտեմբերի 2026 թվական                    քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՆՉԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ը ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 454-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Մարալիկ քաղաքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1997 թվականի հունիսի 17-ի թիվ 6 որոշումից՝ 2026 թվականի մայիսի 15-ին տրված քաղվածքը, ըստ որի քաղաքացիներին հատկացվել է 0,10 հեկտար տնամերձ հողամաս,որը ըստ լիցենզավորված մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագծի տվյալների փաստացի կազմում է 0,13000 հեկտար՝հաշվի առնելով, որ քաղաքացու կողմից հատկացվածից ավել օգտագործվող 0,03 հեկտար հողամասը բավարարում է «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի 12-րդ փողոց 10 հասցեում գտնվող՝ 08-003-0017-0001 կադաստրային

ծածկագրով  հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում.

***որոշում եմ՝***

1. Վերականգնել գույքային իրավունքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքի, Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի 12-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող՝ 08-003-0017-0001 կադաստրային ծածկագրով **0,13000** հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և նրանում առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունների նկատմամբ ճանաչել՝ Կարապետ Վանիկի Համբարյանի /ծնված 9-ը հուլիսի 1959 թվականին, անձնագիր՝ AU0342494, տրված 7-ը հուլիսի 2021 թվականին 022-ի կողմից/, Կարինե Լևայի Համբարյանի/ծնված 16-ը հուլիսի 1961 թվականին, անձնագիր՝ AT0320680, տրված 2-ը դեկտեմբերի 2019 թվականին 022-ի կողմից/, Վահան Կարապետի Համբարյանի/ծնված 17-ը հունվարի 1983 թվականին/, Վահագն Կարապետի Համբարյանի/ ծնված 17-ը հունվարի 1983 թվականին/, Աղունիկ Կարապետի Համբարյանի/ծնված 25-ը հուլիսի 1984 թվականին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հողամասում առկա անավարտ շինությունը (թիվ 1 շինություն) թողնել ինքնակամ՝ <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չափականված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին անհամապատասխան լինելու պատճառով:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի 12-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող հողամասի և նրանում առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունների նկատմամբ քաղաքացիների գույքային իրավունքները վերականգնելու և սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> 454-Ա որոշումը:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«01» սեպտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ N 801-Ա**

«02» սեպտեմբերի 2026 թվական                    քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 2/3, ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ 7-ՐԴ ՓՈՂՈՑ 2/1, ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ 7-ՐԴ ՓՈՂՈՑ 2/2 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 22-րդ կետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման 2-րդ հոդվածի և հիմք ընդունելով քաղաքացի Վահրամ Ռազմիկի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Արտյոմ Աշոտի Սուքիասյանի դիմումը (մուտքագրված Անիի համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 30-ի N 2433 թվագրմամբ).

**Որոշում եմ՝**

1. Հաստատել «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից կազմված, քաղաքացի Վահրամ Ռազմիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Նոր թաղամաս 5-րդ փողոց, 2/3 հասցեում գտնվող 08-003-0021-0001 կադաստրային ծածկագրով 0.07687 հա մակերեսով հողամասը և նրանում առկա 47.4 քառակուսի մակերեսով պարիսպների, Մարալիկ քաղաք Նոր թաղամաս 7-րդ փողոց, 2/1 հասցեում գտնվող 08-003-0021-0005 կադաստրային ծածկագրով 0.48 հա մակերեսով հողամասի և Մարալիկ քաղաք Նոր թաղամաս 7-րդ փողոց, 2/2 հասցեում գտնվող 08-003-0021-0006 կադաստրային ծածկագրով 0.18571 հա մակերեսով հողամասի և շինությունների տեղադիրքը և հատակագիծը:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ վերը նշված հողամասի տեղադիրքի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:

3. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«02» սեպտեմբերի 2026 թվական
ք Մարալիկ